

ՀԱՒԱՏՔ

ՇԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ՄՐՔԻ ԵՒ ԿՐՈՆՈՒՆ ԿՐԹՈՒՆԵՐ.

Ախալքալաքի հայ ժողովուրդը հաւատում է, թէ երկնքի եօթներորդ պարթի վրայ մէ օսկէ արեամ է գրած, որի վրայ նստած է սպիտակահեր Հայր Աստուածը, աջ կողմը Յիսուս Քրիստոս, զլիսի վերև Սուրբ Հոգին: Արանց առջև կանգնած է մարմնով Ս. Գրիգոր Լուսաւորիչը:

Ժողովուրդը հաւատում է, որ տիեզերքը ամբողջապէս կառավարւում է Նրբորդութեան անհասանելի կամքով և որ առանց Նրա նախորոշման մի տերև անգամ վայր չի ընկնում:

Տալով Նրբորդութեանը գերագոյն կատարելութեան և իշխանութեան տիպար, նա Նրա էութեան մասին բնու չի մտածում. և երբ մինը խրկախում է հարցնել նրան այդ մասին, նա պատմելով հեռեեալ դէպքը, համարում է երբեք չմտածել Նրբորդութեան էութեան մասին:

Ասում են, թէ Յակոբ պատրիարքի ժամանակ տասեր կու հայրապետներ հաւարուեցան և խորհուրդ արին, թէ Նրբորդութիւնն ինչ է ու ինչով եղաւ: Նրկար մտածեցին, վիճեցին, վերջապէս շխարհացան մի եզրակացութեան հասնել: Յակոբ պատրիարքը տեսնելով որ գրանք ոչ մի հետեւանքի չեկան, ցանկացաւ ինքը միայնակ քննել և իմանալ: Այս պատճառով կղզիացաւ մի ծովի ափ, խիտ եղեգնուտի մէջ և 12 օր նստած առանց ջրի ու հացի՝ մտածում էր:

Յանկարծ սթափուեց և աեսաւ, որ մի թաշուն ծովից կրացով շուրն տանում, բերում եղի ստից լառազայցած փոսի մէջըն է ածում. զարմացաւ և չգիտէր՝ թէ ինչ է ածում-թըմում է, թէ խաղում:

Այդ ժամանակ թաշունը Աստուծու հրամանով լեզու ելաւ ու ասաց նրան. «Ի՞նչ ես զարմանում, ես կարող եմ այս ծովի շուրք հաւքեցնել այս փոսի մէջ, բայց դու չես կարող Նրբորգութեան էութիւնը զլխիս մէջ հաւքեցնել, լաւ է այլ ևս չմտածես»:

Նա էլ վերջ աւելց ու Նրբորգութեան մասին այլ ևս չմտածեց, այլ մաքուր սրտով հաւատաց ու պաշտեց:

Ընդհանրապէս կանանց դասը սիրում է Ս. Աստուածածնին, որին և աղօթում է ծննդաբերութեան, հիւանդութեան և վշտի ժամանակ. ամենից աւելի սրան են խոստանում մատաղներ և սրա ասնին բազմաթիւ ուխտաւորներ գնում են Վարձիս՝ Վերափոխման տաճարը, Աղէքսանդրապօլ՝ «Նօթփրաց» պատկերը ուխտ անելու:

Սա Ննօփը և Նզիս մարգարէների հետ բնակում է մարմնով երկնքում բոլորովին զատ միւս սրբերից, որոնք մնում են արգարների կայանի վերին յարկում:

Ս. Աստուածածնայ մասին պատմում են, թէ քառասուն կոյսերի հետ սարերում ծագիկ քաղում և ճգնում էր: Նրբ թեչիկ էին մանում, միայն սրա մանած սև թեչի միջից զանազան գոյնի թեչեր էին զուրս գալիս, որից զուշակում էին թէ սա է լինելու Աստուածամայրը: Նրբ ամառն անցկացաւ, կոյսերն իրան սարից և զանազան զրաւականներով պահ աքրուեցան առաքինի մարգկանց: Յովսէփն էլ իւր ուրազը բերեց զրեց ու տարաւ Մարիամ Ս. Կոյսին ձմեռը պահելու:

Մի անգամ, երբ Մամիամ Ս. Կոյսը գնում էր ազբիւր շուր բերելու՝ հրեշտակն երեւեցաւ նրան և աւետիք տուեց, թէ նրանից ծնուելու է աշխարհի Փրկիչը: Մարիամ Ս. Կոյսը իւր հնազանդութիւնը ցոյց տալու համար՝ հէնց վերագործին բաթաթը վերցրեց զրեց փոքին, որ լցի երեսոյ:

Միւս սրբերից ամենից աւելի ժողովրդականութիւն ու

նի Ս. Կարապետը, որի պատը մինչև 7 տարի պահպաններ կան, և որի ազուարը, Գլխակյ վանքը, ամէն տարի ուխտ են գնում: Թէ որչափ մեծ նշանակութիւն է ապրիս ժողովուրդը Ս. Կարապետի պատին, երևում է հետևեալ աւանգութիւնից: Մարիամ Ս. Կոյսը 7 տարի շարունակ պահում է Ս. Կարապետի ծամն ու պատը: Հրեշտակը գալիս սրա հագին աւանում, գնում է: Ծանապարհին սա տեսնում է իւր մօրը, որի ծները երկու ու ծնում են. անցնում են. պատահում է հօրը, մինչի կոկորդը աւազի մէջ թաղուած: Ս. Կոյսը հարցնում է հրեշտակին իւր ծնողների շարչարանքի պատճառը, և նա պատասխանում է. թէ մայրը երկու երեխայ է խեղդել, իսկ հայրը կնոջը շատ նեղութիւն է տուել: Ս. Կոյսը խնդրում է հրեշտակից ազատել գոնէ մօրը: Հրեշտակը ողբանում է երկինք և Հայր Աստուծոյ պատասխան բերում, թէ Ս. Կարապետի պատը պահէ՝ մայրը ասնջանքից կազատի: Ս. Կոյսը համաձայնում է, նորից կենդանանում, գալիս աշխարհ և 3 տարի էլ պատ պահելով ազատում մօրը ասնջանքից:

Առաքեալներից Մատթէոսի մասին պատմում են, թէ գրնաց մարգարեաների մէջ քարոզելու՝ բռնեցին բանգարկեցին: Աստուծու հրամանով Փիլիպպոս առաքեալն էլ ուղարկուեցաւ միևնոյն երկիրը: Երբ սա ևս ծաղրեց նրանց կուռքը թէ այս խրատիլիկն է՞նչ է, ասկիները շարել էք դիւին, երկրպագութիւն էք ապրիս, սրան էլ բանգարկեցին: Սակայն զուար փակելուց լետոյ սա գերբնական զօրութեամբ զուրս էլաւ և զուանը կանգնեց: Բոլորը զարմացան, տեսաւ բաւական ազքաններ շարուել են կռասան շուրջը, հարցրեց թէ է՞նչ են սպասում: Աղքատները պատասխանեցին, թէ քաղցան են. թէ սուրբ ես կշտացրու, գնանք: Փիլիպպոս առաքեալը գուազանը անկեց, թզկնի զառաւ, թուզ հասաւ և այդ աղքատները կերան կշտացան: Բազաւորը երբ լսեց այդ հրաշքն, եկաւ տեսնելու թզեկին: Փիլիպպոս լանդիժանեց սրան և ասաց թէ՛ հրամայիք լանդիժանել այդ կուռքը, ապա թէ ոչ կը հրամայեմ բերանից ըուր բոլորել և խեղդել բոլորիդ: Բազաւորը ըը

Հաւատաց և Փիլիպպոս առաքեալը ցոյց տուեց իւր Հրաշքը. կռքի բերանից ջուր բղխաց և ծածկեց ամբողջ քաղաքը մինչև մարդկանց կոկորդը, այս ժամանակ բոլորը աղաչեցին Փիլիպպոս առաքեալին ազատել իրենց և մկրտել: Փիլիպպոս ջուրը գա-գարացրեց, կործանեց կուռքը և մկրտեց բոլոր բնակիչներին շալ-քրիստոնեայ: Առաքեալներից միայն սա չնահատակուեց, ուստի և չկարողացաւ մտնել արքայութիւն, և կանգնած մնաց գուանը, մինչև որ 11 առաքեալները 32 պատարագ մատուցին և ընդունեցին նրան ներս:

Ս. Սանգաննոս Նախագիւյի Համար ևս պատմում են. Տիառնընդառաջին, երբ բազմաթիւ կանայք երեսմաները գըրկերը շտապում էին գիմարելու Աստուածամօրը և աղչիկներն իրաւունք չունէին մասնակցելու, մի օրիորդ գնում է մի քար գողնոցի մէջ և վազում գէպի Ս. Կոյսը: Սրան մտանայիս յանկարծ լացի ձայն է լսում և նայում, տեսնում է գրկում քարը երեսայ գարնած:

Փողոզրդի շատ քիչ մասին է ծանօթ Հին և նոր կտակարանի բովանդակութիւնը, այն էլ փոփոխուած և աւանդութեան կերպարանք ստացած:

Կրօնական գրուածներից ամենից սիրելին, Աւետարանից յետոյ, Նարեկացու ազօթ քաղիւրքն է. Հիւանդը խնդրում է գըրխին Նարեկ կարգալ բժշկուելու Համար. Յնդկանը բարձի տակ Նարեկ է գնում՝ շարերին Հալածելու Համար. գրազեա ծերունիները Նարեկ են կարգում՝ Հոգիները փրկելու Համար. իմաստութեան տենչացողները 90 անգամ կարգում են նրա Ղ. երորդ գլուխը, իմաստութիւն ստանալու Համար. երկնային կեանքով յափշտակուողները քառասուն անգամ կարգում են նրա Վարերանեալը, երկինք Համբաւնալու Համար. բայց եթէ չկարողանան անընդհատ 40 անգամ կարգալ՝ կը խելագարուին:

Գրողները շատ անգամ անդամաւոր են անում իրենց գրածը. Գրողները շատ անգամ անդամաւոր են անում իրենց գրածը. Գրողները շատ անգամ անդամաւոր են անում իրենց գրածը. Գրողները շատ անգամ անդամաւոր են անում իրենց գրածը.